ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Առաջադրութիւն Մայր Աթոռի Վանական Կառավարութեան նախագահ Տ. Ներսէս վրդ. Մելիք-Թանգեանի անունով, որով պատուէր տրուեց Տ. Տ. Բագրատ, Բարգէն և Մեսրոպ (Նշանեան) վարդապետների գործակցութեամբ և աջակցութեամբ հոգալ ի Տէր հանգուցեալ Տ. Տ. Մատթէոս Բ. Հայրապետի թաղման պատգամաւորների ընակարանի, սենեկեան և առհասարակ վայելուչ ընդունելութեան մասին. 14 դեկտ. 1910 թ. № 1098.

Գրութիւն Իսայի Փիլիպոսեան և ընկերութեան Տփխիսի Առևտրական Տան անդամների անունով, որով գոհունակութիւն և օրհնութիւն յայտնուեց Անգլիացի Ֆ. Լինչի «Հայաստան» մեծահատոր և բազմաբովանդակ գիրքը ռուսերէն թարգմանելու, հրատարակելու և երկու օրինակ ի Տէր հանգուցեալ Հայրապետին մատուցանելու համար, որի մի օրինակը նուիրաբերողի ցանկութեան համաձայն յանձնուեց Մայր Աթոռի մատենադարանին. 16 դեկտ. 1910 թ. № 1118.

Առաջադրութիւն Տփխիսի Ներսիսեան Հոգևոր դպրանոցի հոգաբարձութեան Տ. Նախագահի և պ. պ. անդամների անունով, որով հաստատուեցին իրենց պաշտօններում նորընտիր հոգաբարձուները, նոցա անձնափոխանորդներն և վերստուգիչ յանձնաժողովի անդամները. 16 դեկտեմբ. 1910 թ. № 1119.

Առաջադրութիւն Տփխիսի Մարիամեան-Յովհաննեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութեան անունով Տ. Եփրեմ եպիսկոպոսին հոգաբարձութեան նախագահող նշանակելու մասին. 17 դեկտ. 1910 թ. № 1121.

Առաջադրութիւն Տ. Եփրեմ եպիսկոպոսի անունով,

որով նշանակուեց Տփխիսի Ներսիսեան թեմական Հոգևոր դպրանոցի և Տփխիսի Մարիամեան-Յովհաննեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութեանց նախագահող և առաջադրուեց ընթացք տալ նաև առաջնորդական անկատար մնացած գործերին և դրագրութիւններին. 17 դեկտ. 1910 թ. № 1122.

Առաջադրութիւն ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով տեղեկութիւն տրուեց Տ. Եփրեմ եպիսկոպոսին յիշեալ դպրոցների հոգաբարձութեանց նախագահող նշանակելու մասին. 17 դեկտ. 1910 թ. № 1123.

Առաջադրութիւն Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի Տ. Նախագահողի անունով, որով առաջադրուեց հսկել, որ եկեղեցիներում առանց ժամաշապկի չերգեն և չսպասաւորեն. 20 դեկտ. 1910 թ. № 1127.

Առաջադրութիւն Ատրպատականի Հայոց Առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսի անունով, որով յայտարարելով թէ չէ ընդունուած ի Տէր հանգուցեալ Հայրապետի անունով տուած հրաժարականն, առաջադրուեց վերադառնալ Ատրպատական իւր առաջնորդական պաշտօնին. 21 դեկտ. 1910 թ. № 1113.

Առաջադրութիւն Ատրպատականի Հայոց թեմական խորհրդի անունով, որով տեղեկութիւն տրուեց, որ չէ ընդունուել Տ. Կարապետ եպիսկոպոսի հրաժարականն առաջնորդական պաշտօնից. 24 դեկտ. 1911 թ. № 1141.

Գրութիւն ցաւակցական և մխիթարական պ. Յովհաննէս Իսահակեան Ժամհարեանցի անունով նորա Աթանաս եղբօր մահուան առթիւ.

Գրութիւն Տարօնի Հայոց Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսի անունով, որի հետ ուղարկուեց հանգուցեալ Բարդուղիմէոս Պօղոսեանի անուան նորա կտակով Մշի Ս. Կարապետի վանքում կառուցանելի դպրոցի շէնքի չորս յատակագիծը. յայտնուեց նաև, որ հանգուցեալի բարեպաշտուհի տիկինը խոստացել է աւելացնել շէնքի համար որոշուած գումարն, ինչպէս յայտնում է այդ մասին

Մոսկուայի Տ. Յարութիւն ա. քահ. Պօպովեանը. 29 դեկտ. 1910 թ. № 1162.

Առաջադրութիւն Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի Նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսի անունով, որով նորա միջնորդութեան համաձայն թոյլ տրուեց Փոթի քաղաքի Հայոց Ծխական դպրոցի առանձին դահլիճը դարձնել ժամանակաւոր աղօթատուն, դնելով այնտեղ հին եկեղեցու վէմ քարը, մինչև նոր կառուցանելի եկեղեցու աւարտումը. 31 դեկտ. 1910 թ. № 1164.

Ընդունելով Կարսի վիճակի փոխանորդ Տ. Ուխտանէս վարդ.-ի հրաժարականն, ժակագրութեամբ առաջադրուեց Ս. Էջմիածնի Մինոգին ուղարկել նորան իւր խնդրի համեմատ Սանահնի ժամանակաւոր միաբան և պատուիրել Տ. Եփրեմ եպիսկոպոսին հոգալ Տ. Ուխտանէս վարդապետին անունդ և տալ հանդերձագին նոյն վանքի արդիւնքից ցառանձին անօրէնութիւն. 9 յունուարի 1911 թ. № 1173

Առաջադրութիւն Երևանի Հայոց Տ. Փոխ Թեմակալի անունով, որով Հին Նախիջևանի հայոց եկեղեց. Ծխական դպրոցի նախկին աւագ ուսուցիչ պ. Սմբատ Սմբատեանի վարձատրութեան խնդիրը և նորա բողոքը նոյն դպրոցի հոգաբարձութեան դէմ իրեն պաշտօնից արձակելու մասին թողնուեց առանց հետևանքի՝ ի նկատի ունենալով հոգաբարձութեան կանոնաւոր կարգադրութիւնը. 9 յունուարի 1911 թ. № 1177

Առաջադրութիւն Վրաստանի Հայոց կոնսիստորիայի Տ. Նախագահողի անունով, որով առաջադրուեց եկեղեցիների գաւթում թաղուող ննջեցեալների համար սակաւ միջնորդութիւն անել և այն խոշոր կտակարարների և հռչակաւոր բարեգործների համար. 9 յունուարի 1911 թ. № 1178

Շրջաբերական առաջադրութիւն բոլոր թեմական առաջնորդների անունով, որով առաջադրուեց չմիջնորդել թոյլտուութիւն ստանալու ազգականութեան 6-րդ և խնա-

մութեան 4-րդ աստիճանների պաշկների համար, որով հետև այդպիսինակ պաշկների թոյլտուութիւնը վերապահուած է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի իրաւունքին։ 9 յունուարի 1911 թ. № 1179—1184.

Երկաբերական առաջադրութիւն բոլոր թեմական առաջնորդների անունով, որով առաջադրուեց կարգադրել, որ ոչ մի հոգևոր պաշտօնեայ՝ փոխանորդ, գործակալ և քահանայ, առանց ստանալու առաջնորդի միջոցով Տ. Տեղակալի կանխագոյն թոյլտուութիւնը չգայ Ս. Էջմիածին որ և է՝ անձնական կամ պաշտօնական գործով։ 10 յունուարի 1911 թ. № 1191—1196.

Առաջադրութիւն Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Տ. Լուսարարապետի անունով, որի հետ ուղարկուեց ներքին գործոց Տ. Նախարարի առանձին գործերի պաշտօնեայ Պ. Պետրովի՝ Մայր Տաճարին նուիրաբերած մի արծաթէ ոսկեզօծ կանթեղ իւր պարագաներով, գործադրելու Տաճարում։ 11 յունուարի 1911 թ. № 1200

Առաջադրութիւն Վրաստանի Հայոց կոնսիստորիայի Տ. Նախագահողի անունով, որով առաջադրուեց յորդորել Տփխիսի հայազգի հաւքարներին իրենց վաղեմի խոստման և սովորութեան համաձայն շարունակեն հոգալու Ս. Էջմիածնի Մայր Տաճարում գործադրուող մոմը։ 12 յունուարի 1911 թ. № 1203.

ԲԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Դեկտեմբերի 3-ին թ. 785. Սինոդը լսելով Շամախու կոնսիստորիայի 1909 թ. յուլիսի 25-ի № 920 յայտարարութիւնը, որոշեց. Ներքին Գործերի Պ. Նախարարի թոյլտուութեան համաձայն, պատուիրել Շամախու կոնսիստորիային ընդունել Ղուբայի Հայոց Ս. Աստուածածին եկեղեցու անունով տիկին Ամէլ Ստեփանեանի իւր ա-